«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 18081 09 11 2023թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կանոնադրության 15-րդ կետի 6-րդ ենթակետի, 32-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի՝ 07.10.2023 թ. № 68/10 որոշումը՝

հրամայում եմ.

1.ԵՊՀ ԻՄ-ում թույլատրել կազմակերպել և մատուցել հոգեբանական խորհրդատվական, հոգեթերապևտիկ, անձնային և մասնագիտական զարգացնող բնույթի ծառայություններ մասնաճյուղի ուսանողների, աշխատակիցների ու Տավուշի մարզի բնակիչների համար:

2.Մինչև համապատասխան ստորաբաժանման ձևավորումը՝ ծառայությունների մատուցման աշխատանքների կազմակերպման պատասխանատու նշանակել ԵՊՀ ԻՄ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Մերի Տիգրանի Ազիզյանին:

3.Մերի Ազիզյանին՝ 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում տնօրենի հաստատմանը ներկայացնել գործունեության ծրագիր 2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների համար և համապատասխան մասնագետների խմբի կազմը:

4.Հոգեբանական խորհրդատվական և այլ բնույթի ծառայությունների մատուցման համար ժամանակավորապես տրամադրել Գիտելիքի նորարական հաբի տարածքը՝ ըստ տնօրենության հետ համաձայնեցված ժամանակացույցի:

5.Թույլատրել Մերի Ազիզյանին «Ֆեյսբուք» և «Ինստագրամ» սոցիալական ցանցերում բացել «ԵՊՀ ԻՄ հոգեբանական ծառայություններ» անվանումով էջեր՝ մատուցվող ծառայությունների կազմակերպման, դրանց հանրայնացման և պլանավորվող միջոցառումների մասին մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցներին տեղեկացնելու նպատակով:

6.Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել Մերի Տիգրանի Ազիզյանին, ֆակուլտետների դեկաններին, ստորաբաժանումների ղեկավարներին:

7.Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.Հ.ՄԱԿԱՐՅԱՆ